«Կոնվերս Բանկ» ՓԲԸ բիզնես վարկերի առցանց հարթակի միջոցով վարկային հայտերի ներկայացման պայմաններ և կանոններ

««ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿԸ» բանկային ծառայությունների հեռահար սպասարկման համակարգ է, որը տեղակայված է www.conversebank.am դոմենում և հնարավորություն է տալիս իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաճախորդներին ցանկացած պահի և ցանկացած վայրից ներկայացնել վարկի տրամադրման հայտ՝ մուտքագրելով սույն կանոններով սահմանված տվյալները և կատարելով անհրաժեշտ գործողությունները:

Պայմաններում և կանոններում կիրառվող հասկացություններն ու սահմանումները.

Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, այդ թվում՝ վերջինիս մասնաճյուղերը:

Կայքէջ/Կայք՝ www.conversebank.am:

Հարթակ՝ Բանկի պաշտոնական կայքում գործող վիրտուալ տիրույթ, որը Հաճախորդին հեռահար եղանակով վարկի տրամադրման հայտ ներկայացնելու հնարավորություն է ընձեռում:

Պայմաններ՝ Հարթակի շահագործման և Հարթակի միջոցով առաջարկվող վարկատեսակների տրամադրման համար հայտերի ներկայացման վերաբերյալ սույն պայմանները և կանոնները:

Հաճախորդ՝ Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը Հարթակի միջոցով՝ առցանց եղանակով դիմում է Բանկին՝ Վարկ ստանալու համար:

Վարկ՝ Հաճախորդների տնտեսական գործունեությունը ֆինանսավորելու նպատակով Հարթակի միջոցով ներկայացված և Բանկի կողմից հաստատված Հայտի հիման վրա Հաճախորդին տրամադրվող ֆինանսավորում:

Հայտ՝ Հարթակի միջոցով Բանկին ներկայացվող Վարկի տրամադրման հայտ, որը լրացվում և ներկայացվում է սույն Պայմաններով սահմանված կարգով և վարկավորման գործընթացին ներկայացվող պահանջներով:

Հայտի անհատական համար՝ թվանշանների հաջորդականություն, որի կիրառմամբ Հաճախորդը հնարավորություն ունի ցանկացած պահի և ցանկացած սարքավորման միջոցով հետևելու ներկայացված Հայտի կարգավիճակին:

Հաճախորդի նույնականացման միջոցներ կամ Նույնականացման միջոցներ՝ Հաճախորդի կողմից Հարթակի միջոցով Վարկի ստացման Հայտը և անհրաժեշտ այլ պայմանները, համաձայնությունները, փաստաթղթերը հաստատելու/ստորագրելու և տվյալները Բանկին փոխանցելու համար Պայմանների շրջանակներում օգտագործվող միջոցներ և նույնականացուցիչներ, ներառյալ անձնական տվյալներ, մուտքանուններ, գաղտնաբառեր, էլեկտրոնային ստորագրություններ, տեքստային հաջորդականություններ, պատկերներ, էլեկտրոնային կնիքներ, ժամանակավոր ծածկագրեր, մեկանգամյա կամ

բազմակի օգտագործման կոդեր, համաձայնությունն արտահայտող կոճակներ, ինչպես նաև սույն Պայմաններով սահմանված այլ նույնականացուցիչներ, որոնց կիրառմամբ Հաճախորդը հաստատում է/ստորագրում է փաստաթղթեր (այդ թվում՝ Հայտեր) և/կամ տեղեկություններ է փոխանցում Բանկին՝ հաստատելով իր ինքնությունը, իր գործողությունների իսկությունը և արժանահավատությունը:

Համաձայնությունն արտահայտող կոճակներ՝ «Դիմել», «Համաձայն եմ», «Ընդունում եմ», «Հաստատում եմ», «V» կամ նմանատիպ այլ ծրագրային հրահանգներ (կոճակներ, checkbox-եր), որոնցով արտահայտվում է Հաճախորդի համաձայնությունը առաջադրված պայմաններին և/կամ գործողության կատարումը, և/կամ փաստաթղթի ներկայացումը, սույն Պայմաններով սահմանված կարգով և դեպքերով կարող է ուղեկցվել նաև Նույնականացման միջոցների կիրառմամբ:

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ Հարթակի օգնությամբ էլեկտրոնային ձևավորված փաստաթուղթ, որը վավերացված է Պայմաններով նախատեսված Նույնականացման միջոցներով: Էլեկտրոնային փաստաթղթերի տեսակներն ու նրանց նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանված են Պայմաններում:

Տվյալներ՝ Ֆիզիկական անձանց դեպքում՝ անուն ազգանուն, էլեկտրոնային փոստի հասցե, հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտի համար), բջջային հեռախոսահամար, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ անվանում, հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ), էլեկտրոնային փոստի հասցե և բջջային հեռախոսահամար և այլ անձնական տվյալներ:

Կողմեր՝ Բանկը և Հաճախորդը միասին:

Պայմաններում՝ վերը նշված սահմանումների հոգնակիով օգտագործումը չի հանգեցնում իմաստային փոփոխության, եթե Պայմանների առանձին կետերի բովանդակությունից այլ բան չի բխում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն Պայմաններով կարգավորվում են Հաճախորդների կողմից Հարթակում Հայտի ներկայացման ընթացակարգը, պայմանները, անվտանգության միջոցները, մուտքագրվող փաստաթղթերի նկատմամբ պահանջները, ինչպես նաև Հարթակի օգտագործման այլ պայմանները:

1.2. Պայմաններին տրված համաձայնությունները և գործողությունները կատարվում և հավաստվում են սույն Պայմաններով նախատեսված Նույնականացման միջոցներով:

1.3. Պայմանները հանդիսանում են Հաճախորդի և Բանկի միջև Հարթակի օգտագործման միջոցով ծագած ցանկացած պայմանագրի, համաձայնության և ծագած իրավահարաբերության բաղկացուցիչ մասը, ինչպես նաև Հաճախորդի կողմից վարկավորման պայմանների ընդունման դեպքում՝ նաև դրանց բաղկացուցիչ և անբաժանելի

մասը: Հարթակի միջոցով Հայտ ներկայացնելով՝ Հաճախորդը հաստատում է իր ամբողջական և անվերապահ համաձայնությունը Պայմաններին:

1.4. Սույն Պայմանների խախտումներով փոխանցված Հայտերը կամ թերի, ինչպես նաև ոչ արժանահավատ տվյալների փոխանցումը կարող է հանգեցնել Հայտի մերժման:

1.5. «Համաձայն եմ», «Ընդունում եմ», «Հաստատում եմ» և/կամ Համաձայնություն արտահայտող այլ կոճակների նշումով, և/կամ Նույնականացման միջոցների մուտքագրմամբ՝ Հաճախորդը հավաստում է, որ համաձայն է այն պայմաններին, որոնք ներկայացված են տվյալ համաձայնության ներքո: Հաճախորդը Հարթակի միջոցով Բանկ որևէ դիմում, համաձայնություն կամ այլ ցանկացած փաստաթուղթ մուտքագրելու միջոցով արտահայտում է տվյալ փաստաթուղթը ստորագրելու կամ գործողությունը կատարելու իր կամքը:

1.6. Պայմանները և դրանց ներքո էլեկտրոնային փաստաթղթերը ստանում են Կողմերի համար պարտադիր ուժ՝ Հարթակում Համաձայնությունն արտահայտող կոճակ(նե)րի կիրառման միջոցով ծանոթանալու և ընդունելու պահից:

2. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

2.1. Հաճախորդը պատասխանատվություն է կրում սույն Պայմաններով սահմանված կարգով Հարթակի շահագործման ընթացքում Բանկի հետ փոխանակված նույնականացման տվյալների, փոխանցված յուրաքանչյուր փաստաթղթի գաղտնիության և երրորդ անձանց փոխանցելու, և փոխանցման արդյունքում իր կրած վնասների համար:

2.2. Հաճախորդն ամբողջությամբ պատասխանատվություն է կրում Հարթակում մուտքագրված տվյալների իսկության, ամբողջականության, արժանահավատության, թերի ներկայացման, կատարված տպագրական, այլ սխալների համար, ինչպես նաև անվտանգության և այլ կանոնների չպահպանման, և դրանցից բխող հետևանքների համար, և հավաստում է, որ ներկայացված տվյալները կարող են հիմնավորվել փաստաթղթերով, եթե այդ մասին Բանկը պահանջ ներկայացնի: Հարթակում Հաճախորդի կողմից կատարվող գործողությունները Բանկի կողմից դիտարկվելու են որպես Հաճախորդի կամքի ուղղակի և իրական արտահայտում: Հաճախորդը համակարգում չի կարող կատարել պարտադիր համարվող տվյալների հեռացում կամ օրինակելի ձև հանդիսացող փաստաթղթերում փոփոխություններ, եթե դրանք չեն հանդիսանում փաստաթղթերի լրացման գործողություններ:

2.3. Հաճախորդը երաշխավորում և հավաստիացնում է, որ ունի Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու լիարժեք իրավունքներ՝ Բանկի հետ գործարար հարաբերություններ հաստատելու համար: Հաճախորդը գիտակցում է նաև, որ Բանկի հետ, Պայմանների համաձայն, հաստատված/ստորագրված Հայտ/եր/ը, համաձայնությունները և այլ փաստաթղթերը վավեր և իրավաբանորեն պարտադիր են Հաճախորդի համար, և իրեն հայտնի չէ որևէ հանգամանք, որը կարող է հանգեցնել վերոնշյալ համաձայնությունների/փաստաթղթերի անվավերության: Հաճախորդն ընդունում է, որ իրեն, Բանկի կողմից մատուցվող ծառայություններ տրամադրելիս, Բանկը հիմնվել է սույն կետով

արված երաշխավորությունների և հավաստիացումների ճշմարտացիության վրա, և պարտավորվում է Բանկին զերծ պահել դրանց խախտումներից բխող վեճերից, պահանջներից և կորուստներից:

2.4. Հաճախորդը պետք է ապահովի, որպեսզի իր վերահսկողության ներքո գտնվող սարքավորումներից Հարթակի միջոցով Հայտերը, անհրաժեշտ փաստաթղթերը, անձնական և այլ տվյալները փոխանցվեն, և մնացած գործողությունները կատարվեն վերջինիս իրավասու անձի կողմից: Պայմանների իմաստով իրավասու անձ է հանդիսանում անհատ ձեռնարկատերը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա միանձնյա գործադիր մարմնի գործառույթներն իրականացող անձը (տնօրենը):

2.5. Հաճախորդի վերահսկողության ներքո գտնվող սարքերով՝ ավտոմատացված համակարգերի, ներխուժումների, պատահարների կամ այլ՝ ոչ մարդկային միջամտությամբ տվյալների մուտքագրմամբ հաստատված Հայտի հիման վրա տրամադրված Վարկի վերադարձման համար պատասխանատու է Հաճախորդը:

2.6. Բանկը իր հերթին կարող է նախատեսել, պատկերային և տեքստային նույնականացուցիչների կիրառման միջոցով, Հաճախորդի գործողությունների իսկության հավաստում՝ ուղղված Պայմանների 2.5 կետով շարադրված ռիսկերը կանխելուն:

2.7. Հաճախորդը հավաստում է, որ Հարթակից օգտվում է բացառապես իր տնտեսական գործունեությունը ֆինանսավորելու նպատակով Հայտ ներկայացնելու համար, չի ծավալում որևէ ապօրինի կամ չարտոնված գործունեություն, ինչպես նաև չի իրականացնում գործունեություն, որը հակասում է ՀՀ կամ իր գտնվելու վայրի օրենսդրությանը, և հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել Բանկի կողմից կատարվող ստուգումների և վերահսկողության/մոնիտորինգի համար:

2.8. Ընդունելով Պայմանները՝ Հաճախորդը հավաստիացնում է, որ իր կողմից Համաձայնությունն արտահայտող կոճակների և/կամ Նույնականացման միջոցների մուտքագրմամբ հավաստված փաստաթուղթ կամ տվյալը հավաստի է և իսկական, և պատասխանատվություն է կրում իր կողմից տրված հավաստումների և ներկայացված փաստաթղթերի վավերության և իսկության համար:

2.9. Հարթակի միջոցով ստորագրված փաստաթուղթը համարվում է վավեր, եթե հաստատված է Հաճախորդի կողմից մուտքագրված Նույնականացման միջոցներով՝ Պայմաններով սահմանված կարգով, ինչը նշանակում է, որ Հաճախորդը (Հաճախորդի իրավասու անձը) կարդացել, ծանոթացել, համաձայնել, ընդունել, ստորագրել է Հայտը, համապատասխան պայմանները, համաձայնությունները, տեղեկանքները, այլ փաստաթղթերն ու տեքստերը և պարտավորվում է պատշաճ և ժամանակին կատարել դրանցով նախատեսված պայմանները:

2.10. Հարթակում արտացոլված նույնականացուցիչների գործադրմամբ սույն Պայմանների ընդունումը, և առհասարակ՝ մուտքագրված ցանկացած տվյալ կամ փաստաթուղթ համարվում է փոխանցված Բանկին Հաճախորդի իրավասու անձանց կողմից և հանդիսանում է Հաճախորդի կողմից Հայտի ներկայացման ուղղակի կամարտահայտություն:

2.11. Հարթակում կարող են լինել ժամանակավոր խափանումներ և տեխնիկական վերազինման աշխատանքներ, որի մասին տեղեկացվում է Հարթակում արտացոլվող առանձին հաղորդագրության միջոցով, ընդ որում՝ Հաճախորդը կրում է հաղորդագրություններին չծանոթանալու արդյունքում առաջացած բոլոր բացասական հետևանքների պատասխանատվությունը: Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Հարթակի ժամանակավոր խափանումները որևէ կերպ չեն ազդում Հաճախորդի կողմից Պայմաններով սահմանված պարտավորությունների կատարման վրա:

3. ՀԱՐԹԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Հարթակի միջոցով Հայտի ներկայացման համար Հաճախորդը նշում է իրեն անհրաժեշտ վարկատեսակը և սեղմում է «Դիմել» հրահանգը, այնուհետև բացվում է Հայտի ձևանմուշը:

3.2. Հաճախորդը լրացնում է անհրաժեշտ դաշտերը՝ Բանկի կողմից վարկավորման ընդհանուր պայմաններով առաջարկվող սահմանաչափերի շրջանակներում:

3.3. Հաճախորդը նաև ծանոթանում է Պայմանների 5-րդ գլխով նախատեսված համաձայնություններին՝ առանձին հղումների տեսքով կամ բառացի շարադրանքով, և տալիս իր համաձայնությունը:

3.4. Հաճախորդը նշում է կատարում վարկավորման պայմաններին (որոնք ներառում են նաև տվյալ վարկատեսակի տեղեկատվական ամփոփագիր/եր/ը) ծանոթանալու վերաբերյալ, և ներկայացնում է հայտը Բանկ՝ համապատասխան վանդակում «Համաձայն եմ» հրահանգը սեղմելով:

3.5. Հայտը համարվում է Բանկին ներկայացված՝ համապատասխան տեղեկացումը Հաճախորդի տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու պահից: Ընդ որում, սույն կետով սահմանված տեղեկացման հաղորդագրությամբ Հաճախորդին տրամադրվում է թվանշանների և/կամ տառերի համադրությամբ հայտի անհատական համար, որի օգտագործմամբ Հաճախորդը, Հարթակում կամ Բանկի պաշտոնական կայքում՝ «Ստուգել հայտի կարգավիճակը» պատուհանի միջոցով, կարող է հետևել ներկայացված Հայտի կարգավիճակին (ընդունված, մերժված և/կամ հաստատված):

3.6. Բանկն իրավունք ունի մերժել Հայտը՝ ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև իր վարկավորման պայմաններով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում:

3.7. Բանկը տեղեկացնում է Հաճախորդին Հայտի հաստատման կամ մերժման մասին՝ էլեկտրոնային փոստին հաղորդագրություն ուղարկելով:

3.8. Կապի խափանումների, այդ թվում՝ կապի միջոցների անսարքության հետևանքով Հայտը կարող է չուղարկվել Բանկ, ինչի մասին տեղեկացումը արտացոլվում է Հաճախորդի կողմից օգտագործվող սարքավորման էկրանին:

3.9. Հայտի հետ կապված այլ մանրամասների վերաբերյալ տեղեկություններ՝ Հաճախորդն իրավունք ունի ստանալ Բանկից՝ օգտագործելով Բանկի հետ հաղորդակցման ուղիները:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1. Կողմերը պատասխանատվություն են կրում միմյանց տրամադրած տեղեկությունների հավաստիության, ճշգրտության և դրանց՝ սույն Պայմաններին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան օգտագործման համար:

4.2. Բանկը պատասխանատվություն չի կրում, եթե հետագայում պարզվի, որ Հայտը փաստացի ներկայացվել է ոչ Հաճախորդի կողմից, սակայն Հաճախորդի նույնականացուցիչներով:

4.3. Եթե հետագայում պարզվի, որ Հայտը ներկայացվել և Բանկի կողմից հաստատվել է սխալ կամ ոչ արժանահավատ տվյալների հիման վրա, ապա Բանկը իրավունք է ստանում պահանջել Հաճախորդից՝ Հայտի հիման վրա տրամադրված վարկային պարտավորությունների վաղաժամկետ կատարում, ինչպես նաև պահանջել հատուցելու Բանկին հասցված բոլոր վնասները:

4.4. Հարթակում տեղակայված և/կամ արտացոլված՝ Բանկի կամ վերջինիս հետ համագործակցող բանկի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և հեղինակային իրավունքով պաշտպանվող այլ առարկաները պաշտպանված են ՀՀ օրենքներով և միջազգային պայմանագրերով, և դրանց ապօրինի օգտագործումը կարող է հանգեցնել Հաճախորդի նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառմանը:

4.5. Բանկը պատասխանատվություն է կրում Հարթակի միջոցով մուտքագրված տվյալների և ներկայացված Հայտերի պահպանության և ամբողջականության, անձնական տվյալների և Հաճախորդի վերաբերյալ, գաղտնիք պարունակող, ցանկացած տեղեկատվության արտահոսքի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ապացուցվում է, որ Հարթակի ծրագրային միջավայր ներգործումը տեղի է ունեցել Հաճախորդի կողմից կամ վերջինիս պատկանող, և/կամ վերահսկողության տիրույթում գտնվող սերվերներից, և/կամ Բասնկի տիրույթից դուրս, և/կամ ոչ Բանկի վերահսկողության տիրույթում գտնվող սերվերներից:

4.6. Հաճախորդը կրում է ամբողջական պատասխանատվություն Հարթակի միջոցով, առանց Նույնականացուցիչների պատշաճ կիրառման, կատարված գործողությունների համար և հետագայում պարտավորվում է հատուցել Բանկի կրած բոլոր վնասները, եթե այդպիսիք առկա լինեն:

5. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հաճախորդը Հարթակի միջոցով Հայտ ներկայացնելիս տրամադրում է իր համաձայնությունը Բանկին՝ համաձայն հետևյալի.

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ

- Բանկի կողմից հարցումներ կատարվեն ***«ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, այլ վարկային բյուրոներին, ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին*** և վերջիններիս խնդրում եմ Բանկին տրամադրել

համապատասխանաբար իմ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ֆինանսական տվյալներ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք կարող են առնչվել ինձ հետ համապատասխան վարկային (փոխառություն և այլն) և այլ պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս, ինչպես նաև վարկային (փոխառության և այլն) և այլ պայմանագիր կնքելու դեպքում, այդ թվում՝ Բանկի կողմից մարքեթինգային և/կամ ինձ այլ բանկային ծառայություններ առաջարկելու նպատակով, տվյալ պայմանագրի գործողության ողջ ընթացքում՝ ցանկացած պահի, վերջիններս Բանկին տրամադրեն իմ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ֆինանսական տվյալներ, ինչպես նաև այլ տվյալներ:

Ծանոթացել եմ վարկային պատմությանը և վարկային սքոր գնահատականի էությանը և դրա կարևորությանը, կիրառվող սքորի տեսակներին, սքորի վրա ազդող հիմնական գործոններին և տեղեկացված եմ, որ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին կարող են կատարվել հարցումներ համաձայն ներքոգրյալ աղյուսակի, որոնք կարող են ազդեցություն ունենալ իմ վարկային ամփոփ գնահատականի (սքորի) /օրինակ՝ Ֆայկո սքոր/ վրա.

Վարկային հարցման նպատակ	Վարկային հարցման ենթանպատակ	Ազդեցությունը վարկային սքորի վրա	Հարցման պարբերակա-նություն	Ժամկետ
Նոր վարկային դիմում*	-	Նվազեցնում է	Մեկանգամյա	Նոր ֆինանսավորման հայտի դիտարկման ընթացքում
Երաշխավոր անձ*	Նոր վարկային դիմում			Նոր ֆինանսավորման հայտի դիտարկման ընթացքում երաշխավոր հանդիսացող անձանց դեպքում
Փոխկապակցված անձ*	- Նոր վարկառու - Փոխկապակցված անձի փոփոխություն	Չի ազդում	Մեկանգամյա	Նոր ֆինանսավորման հայտի դիտարկման ընթացքում գրավատու հանդիսացող անձանց դեպքում
Գործող վարկի մոնիտորինգ**	-	Չի ազդում	Պարբերաբար	Վարկային/երաշխավորու-թյան/գրավի պայմանագրի գործողության ընթացքում
Երաշխավոր անձ**	- Գործող վարկ - Գործող երաշխավորի մոնիտորինգ			
Փոխկապակցված անձ***	- Գործող վարկառու			

	- Փոխկապակցված անձի մոնիտորինգ			
Այլ բանկային ծառայություններ	-	Չի ազդում	Պարբերաբար	Բանկում գործող ծառայության պայմանագրերի գործողության ընթացքում
*Այս նպատակով հարցում կատարելու համաձայնությունը պարտադիր պայման է նոր ֆինանսավորման /երաշխավորության/ սահմանաչափի ավելացման հայտի դիտարկման համար: **Այս նպատակով հարցում կատարելու համաձայնությունը պարտադիր պայման է ֆինանսավորման տրամադրման և հետագա սպասարկման համար: ***Այս նպատակով հարցում կատարելու համաձայնությունը պարտադիր պայման է գրավատու հանդիսացող անձանց համար նոր ֆինանսավորման հայտի դիտարկման համար				

- ***Բանկը ցանկացած պահի հարցումներ կատարի ՀՀ օրենսդրությամբ սահմանված Հանրային բազաներին, և բանկային սպասարկման ոլորտում հաճախորդների վերաբերյալ տվյալներ մշակող այլ անձանց, և ստանա իմ վերաբերյալ տեղեկատվություն (այդ թվում՝ անձնական տվյալներ), իսկ վերոնշյալ իրավասու մարմիններին խնդրում եմ, հարցմանն ի պատասխան, ցանկացած հարցվող տվյալ (այդ թվում՝ անձնական) փոխանցել Բանկին, որոնք Բանկի կողմից մշակվելու են ինձ հասցեագրված ծանուցմամբ (այսուհետ՝ Ծանուցում) նկարագրված կարգով և ժամկետներում, որը հասանելի է Բանկի տարածքում և www.conversebank.am (https://www.conversebank.am/hy/customer-rights/) կայքում:***
- իմ անձնական տվյալները Բանկի կողմից փոխանցվեն «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ, ՀՀ Կենտրոնական բանկ և բանկային սպասարկման ոլորտում հաճախորդների վերաբերյալ տվյալներ մշակող այլ անձանց:
- ***Հավաստում եմ, որ կարդացել եմ համաձայնությունը, ծանոթացել եմ Ծանուցմանը, որոնք ինձ համար ամբողջությամբ հասկանալի են և ընդունելի:***

5.2. Սքորինգային (առցանց) համակարգով հաստատված հայտի առկայությունը դեռևս չի համարվում Բանկի կողմից վարկի տրամադրման վերջնական որոշում, և Բանկն իրավունք ունի Հաճախորդի վարկունակության վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ իրականացնել, որի դեպքում վարկի տրամադրման վերջնական որոշումն ընդունվում է Բանկի կողմից, ինչի մասին Հաճախորդը ծանուցվում է:

5.3. Սույն գլխով սահմանված համաձայնությունները համարվում են տրամադրված Հայտի ներկայացմամբ և Հաճախորդը՝ դրանց իր ծանոթացումը և համաձայնությունը նաև

արտահայտում է Հայտի ձևանմուշի համապատասխան վանդակներում «V» համաձայնությունն արտահայտող կոճակով:

5.4. Սույն գլխով տրված համաձայնությունների մասին Հաճախորդը լրացուցիչ հաստատում է Վարկի տրամադրման պայմանագիր կնքելիս:

6. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

6.1. Հաճախորդը պարտավորվում է պահել Հարթակում հաշվառված բոլոր գործողությունների, մուտքագրված բոլոր տվյալների, ներկայացված Հայտերի և Հաստատումների գաղտնիությունը, չհրապարակել և չձևափոխել դրանք, իսկ Բանկն ապահովում է ստացված տվյալների և ներկայացված Հայտերի մշտական հասանելիությունը Հաճախորդներին՝ առանց փոփոխություն կատարելու հնարավորության՝ բացառությամբ տեխնիկական վերազինման աշխատանքների, որոնցով պայմանավորված Հարթակի աշխատանքի դադարների և/կամ անհասանելիության մասին Բանկը, այդպիսի հնարավորության դեպքում, Հաճախորդին տեղեկացնում է նախապես:

6.2. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի անձնական տվյալների, Տվյալների, ինչպես նաև մուտքանվան, գաղտնաբառի, միանգամյա կիրառման կոդերի և/կամ ցանկացած Նույնականացման միջոցի՝ երրորդ անձանց բացահայտվելու, հասանելի դառնալու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար: Հաճախորդը պարտավորվում է Բանկին զերծ պահել ցանկացած պահանջներից, որոնք առաջացել են համակարգի/Հարթակի շահագործման ընթացքում՝ երրորդ անձանց գործողությունների արդյունքում:

6.3. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից օգտագործվող սարքավորման կամ էլեկտրոնային հաղորդակցման ցանցի խափանման կամ ընդհատման, կամ երրորդ անձանց չարտոնված մուտքի արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար, ուստի Հաճախորդը պետք է ինքնուրույն իրականացնի իր կողմից կիրառվող ցանցի (Բանկի հետ սահմանազատման կետից հետո գտնվող) աշխատունակության ապահովումը և ցանցային սարքավորումների պաշտպանությունը:

6.4. Անվտանգության նկատառումներից ելնելով՝ Հաճախորդը պարտավորվում է Բանկին անհապաղ հայտնել համապատասխան լիազորություն չունեցող անձանց կողմից Հարթակից օգտվելու կամ նման փորձի մասին, համապատասխան լիազորություն չունեցող անձանց կողմից վարկային հայտի ներկայացման կամ նման փորձի մասին:

6.5. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդից Հարթակի միջոցով ստացված տվյալների, հանձնարարականների կամ այլ գործողությունների կամ անգործության համար, անգամ եթե ապացուցվի, որ այդ գործողությունները կատարվել են Հաճախորդի անունից հանդես գալու իրավասություն չունեցող անձանց կողմից: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ներկայացված տվյալների անճշտության, թերի ներկայացման և/կամ Պայմանների անվտանգության կանոնների չպահպանման հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:

7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Նույնականացման տվյալների, ներառյալ՝ անվանման, հասցեի, լիազորված անձանց, ինչպես նաև սույն Պայմաններով և Կողմերի միջև կնքված պայմանագրերով սահմանված այլ տվյալների փոփոխության մասին Հաճախորդը պարտավոր է անմիջապես տեղեկացնել Բանկին՝ կրելով չտեղեկացման կամ ոչ պատշաճ տեղեկացման բոլոր ռիսկերը: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի անհատական Տվյալների, այդ թվում՝ մուտքանվան, գաղտնաբառի՝ երրորդ անձանց բացահայտվելու, հասանելի դառնալու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար: Հաճախորդը պարտավորվում է Բանկին զերծ պահել ցանկացած պահանջներից, որոնք առաջացել են Հարթակի շահագործման ընթացքում՝ երրորդ անձանց գործողությունների արդյունքում:

7.2. Պայմանների շրջանակներում Բանկի և հաճախորդների միջև ծագող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ անկախ Հաճախորդի փաստացի գտնվելու վայրից:

7.3. Պայմանները կիրառվում և մեկնաբանվում են ՀՀ օրենսդրությամբ:

Բանկն իրավունք ունի փոփոխել Պայմանները՝ այդ մասին ՀՀ օրենսդրության և Պայմաններով սահմանված կարգով տեղեկացնելով Հաճախորդին: Յուրաքանչյուր փոփոխություն ուժի մեջ է մտնում Կայքում հրապարակվելու պահից և ներառվում է Պայմաններում: